

5.3. Հիդրոոդերևութաբանական պայմանները Հայաստանում

5.3.1. 2011թ. դիտված հիդրոոդերևութաբանական պայմանների համառոտ բնութագիրը:


Ըստ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի պետական ծառայության տեղեկատվության, 2011թ. հանրապետության տարածքի հիդրոոդերևութաբանական վիճակի բնութագիրը ներկայացվում է ստորև.

2011թ. ՀՀ-ում ամսական և տարեկան միջին ջերմաստիճանների և տեղումների քանակների արժեքները և դրանց շեղումները 1961-1990թթ. նորմայից¹

	Միջին ջերմաստիճանը, °C	Միջին ջերմաստիճանի շեղումը 1961-1990թթ. նորմայից, °C	Տեղումների քանակը, մմ	Տեղումների քանակի շեղումը 1961-1990թթ. նորմայից	
				մմ	%
Հունվար	- 3.2	2.1	35.1	- 4.9	116.2
Փետրվար	- 3.8	0.4	60.7	- 23.8	164.4
Մարտ	1.4	0.6	35.9	11.9	75.1
Ապրիլ	6.8	0.0	98.0	- 31.6	147.7
Մայիս	11.7	0.3	106.1	- 21.2	124.9
Հունիս	16.6	1.4	53.4	16.4	76.4
Հուլիս	21.0	2.1	48.3	- 6.3	115.1
Օգոստոս	19.2	0.9	34.9	- 2.6	107.9
Սեպտեմբեր	14.8	0.2	21.2	6.5	76.5
Հոկտեմբեր	9.2	0.7	47.2	0.5	99.0
Նոյեմբեր	- 1.3	- 4.5	31.0	6.4	82.9
Դեկտեմբեր	- 3.3	- 1.0	10.4	22.4	91.7
Միջին տարեկան	7.4	0.3	592	36	104.7

Օդի միջին ամսական ջերմաստիճանը ՀՀ-ում, 2011թ.


°C



¹ 1961-1990թթ. Համաշխարհային օդերևութաբանական կազմակերպության (ՀՕԿ) կողմից ընդունված ստանդարտ ժամանակահատվածն է, որի միջին արժեքն ընդունվել է որպես նորմա:

Տեղումների միջին ամսական քանակը ՀՀ-ում, 2011թ.

մմ




2011թ. ք. Երևանում ամսական և տարեկան միջին ջերմաստիճանների և տեղումների քանակների արժեքները և դրանց շեղումները 1961-1990թթ. նորմայից¹

	Միջին ջերմաստիճանը, °C	Միջին ջերմաստիճանի շեղումը 1961-1990թթ. նորմայից, °C	Տեղումների քանակը, մմ	Տեղումների քանակի շեղումը 1961-1990թթ. նորմայից	
				մմ	%
Հունվար	- 0.6	2.6	20.2	- 8.8	69.7
Փետրվար	0.2	1.2	38.7	0.7	101.8
Մարտ	6.5	1.4	26.4	- 14.6	64.4
Ապրիլ	11.9	0.3	91.0	40.0	178.4
Մայիս	16.3	0.0	68.1	8.1	113.5
Հունիս	22.3	1.7	22.7	- 6.3	78.3
Հուլիս	27.0	2.4	26.0	12.0	185.7
Օգոստոս	25.0	1.1	10.9	1.9	121.1
Սեպտեմբեր	20.3	0.5	4.0	- 5.0	44.4
Հոկտեմբեր	13.3	0.5	23.5	- 8.5	73.4
Նոյեմբեր	2.5	- 4.0	12.3	- 17.7	41.0
Դեկտեմբեր	- 2.1	- 2.6	8.5	- 17.5	32.7
Միջին տարեկան	11.9	0.5	352.3	16.0	95.7

Օդի միջին ամսական ջերմաստիճանը ք. Երևանում, 2011թ.


°C



¹ 1961-1990թթ. Համաշխարհային օդերևութաբանական կազմակերպության (ՀՕԿ) կողմից ընդունված ստանդարտ ժամանակահատվածն է, որի միջին արժեքն ընդունվել է որպես նորմա:

Տեղումների միջին ամսական քանակը ք.Երևանում, 2011թ.

մմ



Անբարենպաստ և վտանգավոր օդերևութաբանական երևույթների դեպքերի քանակը, 2011թ.

միավոր

Անբարենպաստ օդերևութաբանական երևույթներ		Վտանգավոր օդերևութաբանական երևույթներ	
Քամի	216	Ուժեղ քամի	17
Մառախուղ	114	Մառախուղ	40
Գետնաբուք	5	Ուժեղ կարկոտ	8
Ուժեղ ձյուն	4	Ուժեղ անձրև	6
Կարկուտ	17	Ուժեղ շոգ (30.07.2011– 03.08.2011)	1
Ընդամենը	356	Ընդամենը	72

2011թ. ՀՀ տարածքում օդի միջին տարեկան ջերմաստիճանը կազմել է 6.3°C, որը նորմայից (5.5°C) բարձր է 0.8°C-ով: Տեղումների տարեկան քանակը կազմել է 612 մմ, որը գերազանցել է նորման (592 մմ) 3.4%-ով:

Չյան ծածկույթի առավելագույն բարձրությունը հանրապետության տարածքում դիտվել է Արագած բարձր լեռնային կայանում (3229 մ), ապրիլի 30-ի դրությամբ այն կազմել է 260 սմ, փետրվարի 28-ի դրությամբ Ամբերդ գյուղում (ՀՀ Արմավիրի մարզ)՝ 150 սմ, ք.Ջերմուկում (ՀՀ Վայոց ձորի մարզ)՝ 99 սմ, ք.Հրազդանում (ՀՀ Կոտայքի մարզ)՝ 88 սմ և Սեմյոնովկա գյուղում (ՀՀ Գեղարքունիքի մարզ)՝ 72 սմ, մարտի 31-ի դրությամբ Որոտան գյուղում (ՀՀ Սյունիքի մարզ)՝ 75 սմ:

2011թ. հունվար-փետրվարին գետերի մեծ մասում ջրի միջին ամսական ելքերը կազմել են նորմաների 90-130%-ը, մարտին գետերի մեծ մասում՝ 100-140%, ապրիլ-մայիսին՝ 110-180%, հուլիս-օգոստոսին գետերի մեծ մասում՝ 120-130%, առանձին գետերում՝ 60-90%, սեպտեմբեր-հոկտեմբերին՝ 110-150%, նոյեմբեր-դեկտեմբերին՝ 90-120%:

Մայիս-հունիս ամիսներին տեղացած հորդառատ անձրևներից և ձնհալքից Փամբակ, Հրազդան, Մարտունի, Վարդենիս, Արփա, Եղեգիս, Ազատ և Վեդի գետերում դիտվել են վտանգավոր ելքեր:

Տարվա ընթացքում Արփա-Սևան ջրատարով Սևանա լիճ մուտք գործած ջրի ծավալը կազմել է 52.148 մլն. խոր. մ (ներառյալ ստորերկրյա ներհոսքը): Սևանա լճից ջրի բացթողում կատարվել է հունիսի 21-ից մինչև սեպտեմբերի 24-ը՝ 168.334 մլն. խոր. մ:

Սևանա լճի մակարդակը 2011թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է 1899.90 մ, այն բարձրացել է 23 սմ-ով և 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել 1900.13 մ, որը 2010թ. նույն օրվա համեմատ բարձր է 23 սմ-ով:

5.3.2. 2012թ. հունվար ամսվա հիդրոոդերևութաբանական պայմանները: Ըստ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի պետական ծառայության տեղեկատվության, հունվարին օդի միջին ամսական ջերմաստիճանն Արարատյան դաշտավայրում և դրա նախալեռներում եղել է նորմայից բարձր 3-4 աստիճանով, ՀՀ Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի, Շիրակի և Սյունիքի մարզերում՝ 1-2 աստիճանով, ՀՀ Տավուշի մարզում՝ նորմայի սահմաններում:

Միջին տասնօրյակային ջերմաստիճանն առաջին տասնօրյակում եղել է նորմայից բարձր 1-3 աստիճանով, երկրորդ տասնօրյակում՝ 2-6 աստիճանով և երրորդ տասնօրյակում՝ 1-3 աստիճանով, բացառությամբ ՀՀ Լոռու, Սյունիքի և Տավուշի մարզերի, որտեղ այն եղել է նորմայից ցածր 2-5 աստիճանով:

Միջին առավելագույն ջերմաստիճանը Սյունիքի հովիտներում կազմել է +7 +8°C, Արարատյան դաշտավայրում և ՀՀ Տավուշի մարզում՝ +5 +6°C, ՀՀ Լոռու մարզում՝ +3 +4°C, Սյունիքի նախալեռներում՝ +1 +4°C, լեռնային շրջաններում՝ 0 -2°C (ՀՀ Շիրակի մարզում՝ -4°C):

Ամենաբարձր ջերմաստիճանը տարածաշրջանների մեծ մասում դիտվել է հունվարի 16-18-ին: Սյունիքի հովիտներում գրանցվել է +14 +16°C, Արարատյան դաշտավայրում և ՀՀ Տավուշի մարզում՝ +9 +14°C, ՀՀ Լոռու մարզում՝ +8 +10°C, Սյունիքի նախալեռներում՝ +4 +7°C (ք.Գորիսում (ՀՀ Սյունիքի մարզ)՝ +10°C), ՀՀ Գեղարքունիքի, Կոտայքի և Շիրակի մարզերում, Արագածոտնի և Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ 0 +5°C:

Միջին նվազագույն ջերմաստիճանը ՀՀ Գեղարքունիքի, Կոտայքի և Շիրակի մարզերում, Արագածոտնի և Վայոց ձորի լեռնային շրջաններում կազմել է -8 -13°C (ք.Սևանում (ՀՀ Գեղարքունիքի մարզ)՝ -6°C), ՀՀ Լոռու մարզում՝ -5 -7°C (ք.Տաշիրում՝ -9°C), Սյունիքի նախալեռներում՝ -3 -7°C, ՀՀ Տավուշի մարզում՝ -3 -6°C, Արարատյան դաշտավայրում՝ -2 -4°C և Սյունիքի հովիտներում՝ 0 -4°C:

Ամենացածր ջերմաստիճանը տարածաշրջանների մեծ մասում դիտվել է հունվարի 21-23-ին: ՀՀ Գեղարքունիքի, Կոտայքի և Շիրակի մարզերում, Արագածոտնի և Վայոց ձորի լեռնային շրջաններում գրանցվել է -19 -24°C (ք.Սևանում՝ -14°C, ք.Մարտունիում (ՀՀ Գեղարքունիքի մարզ)՝ -16°C, Ֆանտան գյուղում (ՀՀ Կոտայքի մարզ)՝ -15°C), ՀՀ Լոռու մարզում՝ -15 -20°C (ք.Տաշիրում՝ -28°C), Սյունիքի նախալեռներում և ՀՀ Տավուշի մարզում՝ -8 -13°C (ք.Սիսիանում (ՀՀ Սյունիքի մարզ)՝ -17°C), Արարատյան դաշտավայրում՝ -8 -11°C, Սյունիքի հովիտներում՝ -5 -9°C:

Ամսական տեղումների քանակը հանրապետությունում հիմնականում եղել է նորմայից ցածր: ՀՀ Շիրակի մարզում այն կազմել է նորմայի 90-140%-ը, ՀՀ Գեղարքունիքի մարզում՝ 60-110%, ՀՀ Կոտայքի մարզում՝ 70-90%, ՀՀ Արագածոտնի և Վայոց ձորի մարզերում՝ 40-90%,

ՀՀ Լոռու և Տավուշի մարզերում՝ 50-85%, Արարատյան դաշտավայրում՝ 20-54%, ՀՀ Սյունիքի մարզում՝ 60-110% (ք.Քաջարանում՝ 134%):

Հունվարի 1-ին, 3-ին, 7-ին, 9-10-ին, 13-14-ին, 18-ին, 21-22-ին և 29-30-ին առանձին վայրերում, 19-20-ին, 23-24-ին, 26-28-ին և 31-ին տարածաշրջանների զգալի մասում դիտվել են տեղումներ:

Հունվարի 31-ի դրությամբ ձյան ծածկույթի բարձրությունն Արագած բարձր լեռնային կայանում (3229 մ) կազմել է 136 սմ, Որոտան գյուղում (ՀՀ Սյունիքի մարզ)՝ 85 սմ, Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ 32-78 սմ, ՀՀ Կոտայքի մարզում՝ 36-52 սմ, Արագածոտնի լեռնային շրջաններում՝ 20-46 սմ, ՀՀ Շիրակի մարզում՝ 9-43 սմ, ՀՀ Գեղարքունիքի մարզում՝ 15-32 սմ, ՀՀ Լոռու մարզում՝ 5-16 սմ, ՀՀ Սյունիքի մարզում՝ 6-14 սմ, ՀՀ Տավուշի մարզում՝ 1-3 սմ: Արարատյան դաշտավայրում և դրա նախալեռներում, Վայոց ձորի նախալեռներում ձյան ծածկը բացակայել է:

Հունվարի 2-10-ին առանձին վայրերում դիտվել է մառախուղ 50-500 մ տեսանելիությամբ: Հունվարի 2-10-ին, 14-16-ին և 19-23-ին լեռնային շրջաններում և հովտային առանձին շրջաններում դիտվել է քամու ուժգնացում, արագությունը՝ 9-15 մ/վրկ, պոռթկումները՝ 16-20 մ/վրկ:

Հանրապետության գետերի մեծ մասում միջին ամսական ելքերը կազմել են նորմաների 100-130%-ը:

Սևանա լճի մակարդակը հունվար ամսվա ընթացքում իջել է 1 սմ-ով և հունվարի 31-ի դրությամբ կազմել 1900.12 մ, որը 2011թ. նույն օրվա համեմատ բարձր է 18 սմ-ով: